Ա Յ Ս Օ Ր

✦ Երեկոյեան ժ. 7½-ին քաղաքայի դումայի դահլիճում նշանակւած է հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի Թիֆլիզի Յանձնաժողովի և նրան ընտրող բոլոր հայ հասարակութիւնների ներկայացուցիչների բնդհանուր ժողով. օրակարգն է՝ 1. զեկուցում Թիֆլիզի Յանձնաժողովի գործունէութեան 2. հայ գրողների Կովկասեան ընկերութեան բացումն 3. առաջարկ յոբելեանը յետաձգելու մասին և հերթական հարցեր։

✦ Հաս. ժողովարանում, Բարեգ. Ընկ. շէնքում, երեկոյ. 8 ժամից աղնուականների գիմնազիայի դիրեկտոր Ա. Վ. Մդիվանին կը կարդայ դասախօսութիւն, «Արտապարլամենտային գործունէութիւնը Անգլիայում»։

✦ Ե. Ն. Միսարովայի շինութեան մէջ. երեկ. 6 ժամից նշանակւած է «Կոպէկ» ընկ. անդամների և տնտեսական ու վերաքննիչ մասնաժողովների միացեալ նիստը՝ խորհելու ընկ. ընթացիկ գործերի մասին։